Արձանագրություն N 7

ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ/2024/Հ-32 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան **<< 19>> 07. 2024թ.ժամը 11:00**

Օրակարգ՝

ՀՀ ՆԳՆ կարիքների համար **ավտոմեքենաների** ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ/2024/Հ-32 ծածկագրով ընթացակարգի նիստում արձանագրվեց՝

1. Տեղեկություն ընթացակարգի ընթացքի մասին.

ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ/2024/Հ-32 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատման նիստը կասեցվել էր շտկված հայտի ուսումնասիրման և գնահատման համար՝ հիմնվելով նաև ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից սպասվող պատասխան գրության վրա:

ՀՀ Ֆինանսների նախարարություն ուղարկված հարցման հիմնական բովանդակությունը վերաբերվում էր Գոհարիկ ՍՊԸ -ի գնային առաջարկին, որը ներկայացված էր 20% ԱԱՀ-ն ներառյալ գնով:

Առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Գոհարիկ» ՍՊ ընկերության գնային առաջարկը ներկայացվել է 20% ԱԱՀ-ով, իսկ երկրորդ տեղ զբաղեցրած «ԱՎԱՆՏԳԱՐԴ» ՍՊ ընկերության հայտը ներկայացված է 0% ԱԱՀ-ով: Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի պաշտոնական կայքէջի միջոցով ստուգվել է, որ հայտ ներկայացրած երկու ընկերություններն էլ համարվում են ԱԱՀ վճարող: Ներկայացված գնային առաջարկների ճշգրիտ լինելու հանգամանքը պարզելու նպատակով գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է ՀՀ հարկային օրենսգրքի կարգավորումները տվյալ գնման առարկայի մասով:

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի (Ավելացված արժեքի հարկից ազատված գործարքներն ու գործառնությունները) 2-րդ կետի 58-րդ ենթակետի 2024 թվականի հունվարի 1-ից մինչև 2026 թվականի հունվարի 1-ը ԵՏՄ ԱՏԳ ԱԱ 8702 40 000, 8703 80 000 և 8711 60 ծածկագրերին դասվող էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցների ներմուծման և (կամ) օտարման հետ կապված գործարքներն ու գործառնությունները ԱԱՀ-ից ազատվում են: Տվյալ ընթացակարգի դեպքում գնման առարկան համարվում է ԵՏՄ ԱՏԳ ԱԱ 8703 80 000 ծածկագրերին դասվող բացառապես էլեկտրական շարժիչով տրանսպորտային

միջոց: Հետևաբար Գոհարիկ ՍՊԸ-ի գնային առաջարկը, որը ներկայացված է 20% ԱԱՀ ներառյալ, համարվում է սխալ ներկայացված և ենթակա է մերժման:

Նշենք որ ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից ստացված պարզաբանումը հավաստում է վերը նշված օրենքի կետերի իսկությունը, իսկ գնահատման հետ կապված որոշումը վերապահում գնահատող հանձնաժողովին:

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ Գոհարիկ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժվում է, իսկ ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ/2024/Հ-32 ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարվում է չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն:

Ընդունվեց որոշում՝ կողմ 2, դեմ 0 , բացակա 1:

Հանձնաժողովի նախագահ՝ բացակա Վ. Ավագյան

Հանձնաժողովի անդամներ՝ Կ. Աբազյան

Գ. Գասպարյան

Քարտուղար՝ Հ. Ասատրյան